«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2013 թ.

Բովանդակություն

1. Ներածություն 4

2. Որակի արտաքին ապահովման համակարգ....Error! Bookmark not defined.

2.1 Միջին մասնագիտական կրթության համակարգ 6

2.2 Բարձրագույն կրթության համակարգ 6

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ..... 9

4. ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման համակարգ 13

5. Միջազգայնացում 14

6. Զարգացման միտումներ և մարտահրավերներ..... 14

1. Ներածություն

Ստեղծման օրվանից ՈԱԱԿ-ը, սերտ համագործակցելով իր բոլոր շահակիցների հետ, իրականացնում է իր հիմնական առաքելությունը մասնագիտական կրթության որակի հավաստման ոլորտում՝ բավարարելով շահակիցների պանաջները ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման միջոցով: ՈԱԱԿ-ը նաև զգալի աշխատանքներ է իրականացրել մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման ներքին համակարգի ներդրման և զարգացման, ինչպես նաև՝ որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ: Իրականացված հարցումները ցույց են տալիս, որ ՈԱԱԿ-ը զգալի ազդեցություն ունի մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումների վրա, ինչպես նաև վստահություն է ներշնչում իր բոլոր շահակիցներին:

ՈԱԱԿ-ն իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

Ներքին ուղղվածություն՝ ըստ ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագրի՝ 2015 թվականին ՈԱԱԿ-ը նախատեսում է Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ցանցի (ENQA) կողմից անցնել արտաքին գնահատում: Այդ նպատակով ՈԱԱԿ-ը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ մշակել է ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգի տարրերը և 2013 թ-ին միջազգային փորձագիտական խմբի կողմից անցել է արտաքին գնահատում:

2013 թվականին ձևավորվել և իր գործունեությունն է մեկնարկել Հավատարմագրման անկախ հանձնաժողովը: Սկսվել են նաև ոլորտային հանձնաժողովների ձևավորման ուղղությամբ աշխատանքները, որոնց ստեղծումն ամբողջական կդարձնի որակի ապահովման համակարգի ձևավորումը:

Արտաքին ուղղվածություն՝ մասնագիտական կրթության համակարգում կատարվել են զգալի փոփոխություններ. մասնագիտական ուսումնական հաստատությունների մեծ մասը որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակման և ներդրման փուլից անցել է ինքնավերլուծության իրականացմանը, իսկ 10-ը բուհեր արդեն անցել են փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ, մշակվել են գործընթացների բարելավման պլան-ժամանակացույցերը և նախատեսվում է հավատարմագրման մասին որոշումների կայացում: Այսպիսի միտումը վկայում է, որ մասնագիտական կրթության համակարգում առկա է շարժում, որն էականորեն նպաստում է ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարման մոտեցումների վերանայմանը:

Միջազգային ուղղվածություն՝ ՈԱԱԿ-ը միջազգային մակարդակում, ակտիվ մասնակցելով տարբեր նախաձեռնությունների, ստեղծել է ամուր հիմքեր միջազգային ճանաչում ձեռք բերելու համար:

2. Որակի արտաքին ապահովման համակարգ

Մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին գնահատման ոլորտում գրանցվել են զարգացումներ հետևյալ ուղղություններով.

- ՈԱԱԿ-ը ՀՀ ԿԳ նախարարության հետ համատեղ պատրաստել է ՀՀ Կառավարության որոշման նախագիծ «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ» - ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Այս փոփոխությունները կոչված են նպաստել ՈԱԱԿ-ի գործունեության անկախությանը և այն դարձնել համահունչ միջազգային պահանջներին:

- Մշակվել է ՀՀ Կառավրության որոշման նախագիծ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: Սույն նախագծում առաջարկվում է հստակեցնել ՈԱԱԿ-ի նպատակները, գործառույթները, շահառուների շրջանակը, փոփոխել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի անդամների թվաքանակը և կազմը, նախատեսել դրույթներ ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի վերաբերյալ: Սույն փոփոխություններն ու լրացումները կնպաստեն ՈԱԱԿ-ի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

- Ձևավորվել է ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը, որը մշտապես գործող, անկախ, կոլեգիալ մարմին է և կոչված է որոշում կայացնել ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման վերաբերյալ: ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի 2013 թվականի սեպտեմբերի 6-ի N 01/14.13/[170235]-13 արձանագրային որոշմամբ հաստատվել է Հավատարմագրման հանձնաժողովի անհատական կազմը:

- ՈԱԱԿ-ի աշխատակիցները Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման նպատակով բուհերին դրամաշնորհների տրամադրման» ծրագրով ուսումնասիրել են 6 ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված դրամաշնորհային հայտերը և տվել են մասնագիտական կարծիք: Նույն ծրագրի շրջանակներում 21 ուսումնական հաստատությունում կատարված աշխատանքների վերահսկողության նպատակով իրականացվել է մոնիտորինգ:

2.1 Միջին մասնագիտական կրթության համակարգ

Միջին մասնագիտական կրթության համակարգում 2013 թ. ՈԱԱԿ-ը հիմնականում իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներից պաշտոնական հավատարմագրման գործընթացներին անցում կատարելու համար. կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներում ընդգրկված ուսումնական հաստատությունների ղեկավարների, ինչպես նաև՝ փորձագետների ու համակարգողների մասնակցությամբ: Այդ հանդիպումների ընթացքում հստակեցվել են հավատարմագրման չափանիշների ու չափորոշիչների կիրառելիության հետ կապված հարցերը: Նախապատրաստվում են առաջարկներ ոլորտի հաստատությունների հավատարմագրման կարգում բարելավումներ իրականացնելու վերաբերյալ:

2013թ. շարունակվել են աշխատանքները ոլորտի արտաքին գնահատման համար անհրաժեշտ փորձագետների հավաքագրման ու նրանց վերապատրաստման ուղղությամբ: Փորձնական հավատարմագրման գործընթացներ իրականացնելու համար նաև աշխատանքներ են իրականացվել արտաքին ռեսուրսների հայթհայթման ուղղությամբ:

2.2 Բարձրագույն կրթության համակարգ

Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն երկրորդ ծրագրի» շրջանակում բարձրագույն կրթության համակարգում ավարտվել են 2012 թվականին սկսված փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները 3 բարձրագույն ուսումնական հաստատություններում. մեկ պետական՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, և երկու ոչ պետական՝ Երևանի «Գլաձոր» և Հյուսիսային համալսարաններում:

Փորձագիտական խմբերի վերջնական զեկույցները սահմանված ժամկետներում կազմվել, տրամադրվել են բուհերին, լրամշակվել են, հաշվի առնելով վերջիններիս առարկությունները, որից հետո ներկայացվել են Հավատարմագրման հանձնաժողովին:

Վերոնշյալ ծրագրի շրջանակում, ըստ հաստատված ժամանակացույցի, փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ են իրականացվել՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում:

- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում փորձագիտական խումբը բաղկացած է եղել տեղացի չորս և մեկ օտարերկրյա փորձագետներից. որպես միջազգային փորձագետ մասնակցել է Մեծ Բրիտանիայի Որակի ապահովման կենտրոնի մասնագետ, բարձրագույն կրթության խորհրդական պրոֆ. Դեյվիդ Թիմսը :
- Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում որպես միջազգային փորձագետ մասնակցել են Վրոցլավի /Լեհաստան/ Երաժշտական ակադեմիայի նախկին ռեկտոր, պրոֆ. Գրժեգորժ Կուրզինսկին և Ռեյկյավիկի /Իսլանդիա/ Արվեստների ակադեմիայի երաժշտության ամբիոնի վարիչ Միստ Թորկելստիրը:
- ՀՊՃՀ-ում փորձագիտական խումբը բաղկացած է եղել տեղացի չորս և մեկ օտարերկրյա փորձագետներից, որպես միջազգային փորձագետ մասնակցել է ԱՄԷ Ակադեմիական հավատարմագրման հանձնաժողովի նախագահ Դեյվիդ Վուդհաուզը:

Փորձագիտական խմբերի վերջնական զեկույցները սահմանված ժամկետներում կազմվել, տրամադրվել են բուհերին, լրամշակվել են, հաշվի առնելով վերջիններիս առարկությունները, որից հետո ներկայացվել Հավատարմագրման հանձնաժողովին:

Համաշխարհային բանկի՝ ՀՀ ԿԳՆ տրամադրված դրամաշնորհով «Հայաստանում որակի ապահովման ոլորտում տեխնիկական աջակցություն» (ARQATA) ծրագրի աջակցությամբ անց են կացվել նաև փորձնական ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ Երևանի պետական և Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարաններում: Վերոնշյալ գործընթացները համակարգվել են ՈԱԱԿ-ի և Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման կազմակերպության (NVAO) կողմից:

- Երևանի պետական համալսարանում և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման գործընթացներում փորձագիտական խմբերը բաղկացած են եղել տեղացի երեք և երկու օտարերկրյա փորձագետներից. որպես միջազգային փորձագետներ մասնակցել են Բրյուսելի /Բելգիա/ Հոսպիտալ համալսարանի խորհրդի նախագահ Բեն Վան Կամպը և Լեյդենի /Հոլանդիա/ համալսարանի կենսաբանության պրոֆեսոր Յան Կայնեն:
- Երևանի պետական բժշկական համալսարանում և՛ ինստիտուցիոնալ, և՛ ծրագրային հավատարմագրման գործընթացներում փորձագիտական խմբերը բաղկացած են եղել տեղացի երեք և երկու օտարերկրյա փորձագետներից, որպես միջազգային փորձագետներ մասնակցել են Բրյուսելի /Բելգիա/ Հոսպիտալ համալսարանի խորհրդի նախագահ Բեն Վան Կամպը և Մաաստրիխտի /Հոլանդիա/ համալսարանի բուժական ֆակուլտետի դեկան Հարրի Հիլլենը:

Փորձագիտական խմբերի վերջնական զեկույցները սահմանված ժամկետներում կազմվել, տրամադրվել են բուհերին, լրամշակվել են հաշվի

առնելով վերջիններիս առարկությունները, որից հետո ներկայացվել են Հավատարմագրման հանձնաժողովին:

TEMPUS-PICQA ծրագրի շրջանակներում Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) հետ միասին իրականացվել է համատեղ հավատարմագրման գործընթացների փորձարկում ՀՊՃՀ երկու կրթական ծրագրերի օրինակով:

- ՀՊՃՀ երկու կրթական ծրագրերի փորձնական հավատարմագրման գործընթացներում փորձագիտական խմբերը բաղկացած են եղել տեղացի երեք և օտարերկրացի երկու փորձագետներից, որպես միջազգային փորձագետներ մասնակցել են Ֆուլդայի /Գերմանիա/ կիրառական գիտությունների համալսարանի կիրառական համակարգրագիտության ամբիոնի պրոֆեսոր Ուլրիխ Բուհլերը և Ֆրայբուրգի /Գերմանիա/ համալսարանի համակարգչագիտության ամբիոնի պրոֆեսոր Տոմաս Օտմանը:

Փորձագիտական խմբի վերջնական զեկույցը սահմանված ժամկետում կազմվել, տրամադրվել է բուհին, լրամշակվել է վերջիններիս առարկությունների հաշվառմամբ: Հավատարմագրման կարգով նախատեսվում է, որ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելուց հետո զեկույցը կարող է ներկայացվել Հավատարմագրման հանձնաժողովի քննարկմանը:

Փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բոլոր տասը բուհերը պատրաստել են շարունակական բարելավումների պլան-ժամանակացույցեր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից, և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

2013թ. հիմնադրամը Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակում սկսել է փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացները ևս հինգ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում, Հայաստանի պետական տնտեսագիտական, Երևանի «Հայբուսակ» և Գյուղատնտեսական, ինչպես նաև «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարաններում: Հավատարմագրման գործընթացների նախապատրաստական փուլում ՈԱԱԿ-ի մասնագետները վերոնշյալ բուհերում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծություններ իրականացնող աշխատանքային խմբերին մատուցել են երկամսյա տևողությամբ խորհրդատվական ծառայություններ՝ նախապես համաձայնեցված ժամանակացույցի համաձայն: Տրամադրված խորհրդատվության արդյունքում նշված հաստատությունների կողմից պատրաստվել և Հիմնադրամ են ներկայացվել ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունները: ՈԱԱԿ-ի համակարգողներն ուսումնասիրել և գնահատել են ներկայացված ինքնավերլուծությունների համապատասխանությունը սահմանված ձևաչափերին և լրամշակման

/անհրաժեշտության դեպքում/ ենթարկելուց հետո ընդունել են դրանք փորձաքննության ենթարկելու համար:

Հավատարմագրման գործընթացներն իրականացվում են հավատարմագրման կարգին համապատասխան՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ, դրանք կշարունակվեն և ավարտին կհասցվեն 2014 թ. ընթացքում:

3. Շահակիցների հետ փոխհարաբերություններ

ՈԱԱԿ-ը շահակիցների համար իրականացրել է զգալի աշխատանքներ որակի ապահովման համակարգ ստեղծելու ուղղությամբ.

- «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը ստացել էր տեխնիկական առաջադրանք իրականացնելու որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում թեմայով վերապատրաստումներ ՀՀ բոլոր պետական և ոչ պետական բուհերի շուրջ 400 որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համար, որն իրականացվել է արդեն իսկ մշակված որակի արտաքին ապահովման մեխանիզմներով: Այս գործընթացը պետք է նպաստի բուհերի որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակմանն ու ներդրմանը՝ հանգեցնելով վերոնշյալ երկու համակարգերի լեգիտիմությանը, գործունակությանն ու արդյունավետությանը: Նշված գործընթացները միտված են զարգացնելու բուհերի օպերատիվ կարողությունները որակի ներքին, ինչպես նաև արտաքին ապահովման համակարգերի ներդրման և կառավարման գործում:

  Վերապատրաստումները մեկնարկել են մշակման փուլից, որի ընթացքում 2013 թվականի հունվարից, պատրաստվել է իրատեսական պլան վերապատրաստողների վերապատրաստման երեք փուլերի համար, վերապատրաստումների երկու փուլերի և յուրաքանչյուր ուսումնական հաստատության ներկայացուցիչների հնգօրյա վերապատրաստման/ուղղորդման համար, մշակվել են վերապատրաստողների և վերապատրաստվողների հավաքագրման չափանիշներ, իրականացված վերապատրաստումների որակի վերահսկման և մշտադիտարկման պլան և գործիքներ, մշակել են վերապատրաստվողների սերտիֆիկացման թեստերը, վերապատրաստման փաթեթը, վերապատրաստման ակնկալվող արդյունքները, զեկույցները, ընթացիկ հանձնարարությունները և բաշխման նյութերը:

  2013 թվականի փետրվարից ՈԱԱԿ-ը հավաքագրել և եռափուլ վերապատրաստումներ է իրականացրել վերապատրաստողների համար: Ընդհանուր առմամբ, ՈԱԱԿ-ն իրականացրել է վերապատրաստումներ 18 ներկայացուցիչների համար, ովքեր

արդեն մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպած փորձնական հավատարմագրման գործընթացներին, թե՛ որպես փորձագետ, և թե՛ որպես ինքնավերլուծություն իրականացնող: Նախապես մշակված չափանիշների հիման վրա կատարվել է ընտրություն և վերապատրաստման մասնկիցներից լավագույն 15-ն իրականացրել են բուն վերապատրաստումները:

2013 թվականի ապրիլից դեկտեմբեր ամիսների ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է երկփուլ եռօրյա վերապատրաստման դասընթացներ ՀՀ բոլոր պետական և ոչ պետական բուհերի շուրջ 400 որակի ապահովման պատասխանատուների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համար: Երրորդ փուլում իրականացվել է հնգօրյա վերապատրաստում/ուղղորդում երկփուլ վերապատրաստումներին մասնակցած անձանց համար իրենց ուսումնական հաստատություններում:

Յուրանքանչյուր վերապատրաստման փուլի ընթացքում ՈԱԱԿ-ն իրականացրել է մշտադիտարկում՝ համաձայն մշակված պլանի: Մշտադիտարկումն իրականացնելու համար սահմանված էր ժամանակացույց, որը կատարվել է հետևյալ քայլերով՝

- դիտարկումներ՝ վերապատրաստման օրվա ընթացքում և գրառումներ հետագա վերլուծության համար,
- հարցաշարեր՝ յուրաքանչյուր եռօրյա դասընթացների ավարտին: Վերապատրաստումների յուրաքանչյուր փուլի ավարտից հետո, արդյունքները վերլուծվել և վերհանվել են խնդիրների բարելավման նպատակով:

Վերապատրաստումների փուլային վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ մասնակիցների մեծ մասը (70%) գոհ է վերապատրաստման դասընթացների նյութից և բովանդակությունից: Մասնակիցները նշել էին, որ վերապատրաստման ամենաուժեղ կողմը վերապատրաստողներն են իրենց մասնագիտական որակներով և պատրաստվածությամբ (20.8%), որից հետո շեշտադրվել է գործնական աշխատանքի ճիշտ կազմակերպումն արդյունավետ մեթոդների կիրառման միջոցով (15.8%), վերապատրաստման նյութի ընդգրկունությունն ու վերլուծականությունը (9.4%), քննարկումների արդյունավետությունը (10.8%), նոր գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձևավորումը (10.5%):

Վերապատրաստումներն իրականացվել են հնարավորինս գործնական՝ հիմնականում հղվելով բուհում իրականացվող առանձին գործընթացներին և մասնակիցներին քայլ առ քայլ ցույց տալով որակի ապահովման գործիքների մշակման եղանակը, վերլուծության եղանակները և ինքնավերլուծություն պատրաստելու մոտեցումները:

Վերապատրաստումների երրորդ փուլը հիմնված էր գործնական առաջադրանքների վրա: Յուրաքանչյուր ուսումնական հաստատության թիմ վերլուծեց իրենց բուհի գնահատման համակարգը տրված ձևաչափով՝

կիրառելով SWOT վերլուծության մեթոդը գնահատման համակարգի ուժեղ և թույլ կողմերը դուրս բերելու համար. թիմերը նաև իրականացրեցին բենչմարքինգ /համեմատական վերլուծություն/ այլ բուհերի գնահատման համակարգերի հետ:

Եռափուլ վերապատրաստումների ավարտին, իրականացվեց մասնակիցների թեստավորում՝ համաձայն մշակված թեստավորման հանձնարարության: Համաձայն հանձնարարության՝ վերապատրաստողները պետք է ընտրեին որևէ դասընթաց (եթե դասավանդում են, ապա՝ իրենցը), համեմատեին այն նմանատիպ այլ դասընթացների հետ բուհում կամ դրանից դուրս: Նշեին դասընթացի ուժեղ և թույլ կողմերը և, ելնելով ստացված արդյունքներից, մշակեին դասընթացի կազմակերպման բաղադրիչները (օրինակ՝ դասավանդման մեթոդ, գնահատում, բովանդակության արդիականացում, ուսանողների ներգրավում, խմբային աշխատանքի կիրառում, ուսումնառության և դասավանդման գործընթացում հետազոտական մեթոդների կիրառում և այլն) գնահատման և բարելավման քայլեր: Պետք է առաջարկեին դասընթացի որակի ապահովման տարբեր գործիքներ:

Վերապատրաստման և թեստավորման արդյունքում որոշվեց տալ երկու տիպի հավաստագիր՝ վերապատրաստման մասնակիցները կստանան «Մասնակցի հավաստագիր», իսկ հանձնարարությունը հաջողությամբ կատարողները կհամարվեն լավ փորձի կրողներ և կստանան «Որակի ապահովման աջակցի հավաստագիր»:

ՈԱԱԿ-ը նախատեսում է իրականացնել ամփոփիչ համաժողով 2014 թվականի մայիսին՝ վերապատրաստումների արդյունքներն ամփոփելու և լավագույն փորձը տարածելու համար:

- 2013 թվականի դեկտեմբերի 2-ին և 3-ին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ) ՀՀ կառավարության աջակցությամբ անցկացրեց «Անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում. Վստահության ձևավորում» թեմայով որակի ապահովման երկրորդ ֆորումը: Ֆորումի նպատակն էր խթանել որակի ապահովման վերաբերյալ երկխոսությունը ՈԱԱԿ-ի շահակիցների շրջանում, տարածել տեղեկատվություն ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում որակի ներքին և արտաքին ապահովման վերաբերյալ, ինչպես նաև, քննարկել անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները և բացահայտել ՀՀ-ում կրթության որակի ապահովման բարելավման նոր հնարավորությունները:

  Որակի ապահովման երկրորդ ֆորումը համախմբեց ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարներին, որակի ապահովման փորձագետներին, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներին, որակի ապահովման գործընթացներում ներգրավված անձանց,

ուսանողներին ու ոլորտի այլ շահակիցներին հնարավորություն տալով իրականացնել լայնածավալ քննարկումներ: Ֆորումի շրջանակում քննարկվեցին ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրները, բուհերի փորձնական ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացները, որակյալ կրթության մարտահրավերները: Միջազգային փորձագետների կողմից ներկայացվեցին եվրոպական ուղենիշներին և չափորոշիչներին (ESG) համապատասխան ՈԱԱԿ-ի նախնական արտաքին գնահատման արդյունքները, տեղի ունեցան երեք վերապատրաստման դասընթացներ:

Շուրջ 250 շահակից, այդ թվում՝ ազգային և միջազգային փորձագետներ, մասնակցեցին համաժողովին:

Ֆորումի ավարտին իրականացված հարցումները ցույց տվեցին, որ մասնակիցները բավարարված են ֆորումի ընդհանուր բովանդակությունից: Որպես ուժեղ կողմեր ֆորումի մասնակիցները նշել էին ներկայացված նյութի արդիականությունը և կիրառելիությունը (20.6%), որից հետո շեշտադրվել էր բոլոր բուհերի, ռեկտորների և եվրոպացի փորձագետների ներկայությունը (17.6%) և ֆորումի ընթացքում տեղական և միջազգային փորձի ներկայացումն ու փորձի փոխանակման հնարավորության ապահովումը (14.7%): Այնուհետև՝ մասնակիցները ֆորումի ուժեղ կողմ են համարել զեկուցողների պրոֆեսիոնալիզմը (11.8%), զեկույցների բովանդակային, վերլուծական և փորձով հարուստ լինելը (11.8%), ֆորումի կազմակերպվածության բարձր մակարդակը (11.8%), ֆորումի ընթացքում ընձեռնված երկխոսության և մտքերի ազատ փոխանակման հնարավորությունը (11.8%):

Ֆորումի ավարտին ՈԱԱԿ-ի կայքում տեղադրվել են ֆորումի բոլոր նյութերը, մասնակիցներին ուղարկվել են ֆորումի բոլոր ելույթների տեսաձայնագրությունները DVD սկավառակով և ներկայացումները տպագիր տեսքով: «Անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները՝ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգում. վստահության ձևավորում» թեմայով որակի ապահովման երկրորդ ֆորումն ամբողջությամբ ծառայեց իր նպատակին, ինչը հավաստում են մասնակիցների արձագանքները և բավարարվածության հարցաշարի արդյունքների վերլուծությունը:

- ՈԱԱԿ-ը՝ կարևորելով ուսանողների դերը որակի ապահովման մշակույթի ձևավորման գործընթացում, 2013 թվականին «Ուսանողության ձայն» աշխատանքային խմբի հետ համատեղ իրականացրել է «Բուհերում գիտելիքի գնահատման վերաբերյալ ուսանողների բավարարվածությունը» թեմայով վերապատրաստումներ, իրականացրել է ֆոկուս խմբեր ուսանողների հետ: Ընդհանուր առմամբ, իրականացվել է երեք ֆոկուս խմբային քննարկում՝ I-II, III-IV և մագիստրատուրա I-II

կուրսերի հետ մեկական ֆոկուս խմբային քննարկում: Յուրաքանչյուր խմբային քննարկմանը մասնակցել է 7-8 ուսանող: Քննարկումներին մասնակցել է ավելի քան 20 ուսանող ԵՊՀ-ից, ԵՊԿ-ից, ԵՊԼՀ-ից, ԵՊԲՀ-ից, ՀՖՀ-ից, ԵԳՊԱ-ից:

4. ՈԱԱԿ-ի որակի ապահովման ներքին համակարգ

Համաձայն հիմնդրամի ռազմավարության՝ 2015 թվականին ՈԱԱԿ-ը նախատեսում է Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի կողմից անցնել արտաքին գնահատում: Այդ նպատակով հաշվետու տարում ՈԱԱԿ-ը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ մշակել է որակի ապահովման տարրեր և սեպտեմբերին Համաշխարհային բանկի «Հայաստանում որակի ապահովման ոլորտում տեխնիկական աջակցություն» (ARQATA) ծրագրի շրջանակներում իրականացվել է նախնական արտաքին գնահատում, որը միտված էր՝

- նախապատրաստելու ՈԱԱԿ-ին Մասնագիտական կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի լիիրավ անդամակցության դիմելուն,
- գնահատելու, թե որքանով են ՈԱԱԿ-ի գործընթացները համապատասխանում Որակի ապահովման չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից:

2013 թ-ի հունվարին Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության աշխատակիցների օժանդակությամբ ՈԱԱԿ-ը սկսել է իրականանցել հիմնադրամի ինքնավերլուծությունը՝ ըստ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում գործող Որակի ապահովման չափորոշիչների ու ուղենիշների (ESG): Ինքնագնահատումն իրականացվել է ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ. Խորհրդի կողմից այս գործընթացի կարևորումն ապահովում է ՈԱԱԿ-ի գործունեության արժանահավատությունը, ինչպես նաև գնահատման գործընթացի ճանաչումն ազգային և միջազգային մակարդակներում:
Ինքնագնահատման զեկույցի նախնական տարբերակը ներկայացվել է փորձագիտական խմբին 2013 թ-ի հունիսին, որի վերաբերյալ խումբը տվել է մեկնաբանություններ: Փորձաքննության արդյունքում ներկայացվել են մեկնաբանություններ, դիտարկումներ և բարելավմանը միտված խորհրդատվություններ:

5. Միջազգայնացում

Միջազգայնացման ոլորտում նվաճումները գրանցվել են հետևյալ ուղղություններով.

- ՈԱԱԿ-ը, որպես գործընկեր հաստատություն, ներկայացվել է ՏԵՄՊՈՒՍ-ի վեց ծրագրերում, որոնք արժանացել են հավանության Եվրամիության կողմից և ներկայումս իրականացվում են: Ընդ որում, հինգ դրամաշնորհի ղեկավար են հանդիսանում հայկական բուհեր: Ծրագրերը միտված են մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը, որակի ապահովման համակարգի ամրապնդմանը՝ անդրադառնալով համակարգում գոյություն ունեցող խնդիրներին:
- Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ն իրականացնում է.
    - պետական և ոչ պետական բուհերի փորձնական հավատարմագրում,
    - իրականացնում է որակի ապահովման ներքին և արտաքին համակարգերի ներուժի ձևավորմանը միտված ARQATA ծրագիրը Նիդեռլանդների և Ֆլանդրիայի հավատարմագրման գործակալության հետ համատեղ:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ, ՀԲ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք վերապատրաստումների, ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների իրականացմանը:
- ՈԱԱԿ-ը շարունակում է ակտիվ մասնակցել INQAAHE և ENQA միջազգային ցանցերի զարգացումներին, մասնակցում է ENQA աշխատանքային խմբերում և ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում:

6. Զարգացման միտումներ և մարտահրավերներ

Ինչպես ՈԱԱԿ-ի նախաձեռնած մասնագիտական կրթության համակարգի որակի ապահովման գործընթացների վերլուծությունը, միջազգային փորձագետների դիտարկումները, այնպես էլ իրականացված հավատարմագրման գործընթացներն ու ուսանողների հարցման

արդյունքները ցույց են տալիս, որ մասնագիտական կրթության համակարգն ունի զարգացման հետևյալ միտումները և մարտահրավերները:

ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման խթան են հանդիսանում և նպաստում են դրանց հնարավորությունների զարգացմանը: ՈԱԱԿ-ը դիտվում է որպես խորհրդատու և երկրում որակի ապահովման մշակույթի ձևավորման գործում միակ արտաքին մարմին: Ընդհանուր առմամբ, ուսումնական հաստատությունները բավականին աշխատանքներ են իրականացնում որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ, մանավանդ այնպիսի պայմաններում, երբ որակի ապահովման տարբեր բաղադրիչներ մինչ այժմ բացակայել են: Սակայն, բնավ, չի նշանակում, որ մինչև որակի արտաքին ապահովմանը ներկայացվող պահանջների սահմանումը, ուսումնական հաստատությունները բավականաչափ ուշադրություն չեն դարձրել կրթության որակին: Այնուամենայնիվ, բացակայել են որակը խթանող համակարգված մոտեցումները և հաստատված ընթացակարգերը:

Իրականացվող բոլոր գործընթացների արդյունքում ի հայտ են եկել համակարգային խնդիրները, որոնց լուծումները կբերեն կրթության որակի բարելավմանը: Խնդիրներից հատկապես հատկանշական է նշել հետևյալները՝

- Մասնագիտական կրթական հաստատությունների և ֆակուլտետների ինքնավարության և հաշվետվողականության բալանսի ապահովումը,
- ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգի հետագա հզորացումը,
- Ուսանողակենտրոն ուսուցման ապահովումն բուհի բոլոր տիրույթներում՝ ճկուն կրթական ծրագրերի իրականացում, կրեդիտային համակարգի լիարժեք կիրառում, դասավանդման մեթոդների արդիականացում,
- Միջազգայնացման շեշտադրումը՝ շարժունության ապահովում, համադրելիության խթանում,
- Դասախոսական անձնակազմի սերնդափոխման ապահովումը,
- Կրթական ծրագրերի և հետազոտության միջև կապի ամրապնդումը,
- Կրթական միջավայրի համապատասխանեցում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներին: